

Իրականությանը պետք է պատասխանատվությամբ վերաբերվել

**Քաղաքագետ, պատմական գիտությունների թեկնածու Արմեն Այվազյանի՝ «Դե-
ֆակտո» գործակալությանը տված բացառիկ հարցազրույցը**

-Իր առաջին ելույթներից մեկի ժամանակ Ադրբեջանի նորընտիր նախագահ Իլհամ Ալիևը հայտարարեց, որ ղարաբաղյան հարցի շուրջ բանակցությունները պետք է սկսել զրոյից: Այլ հայտարարություններով նա դեռևս հանդես չի եկել: Ձեր կարծիքով, ի՞նչ նկատի ունենա Իլհամ Ալիևը «զրո» ասելով: Եվ ինչի՞ց ելնելով է նա այդպես ասում:

-Իլհամ Ալիևը զրոյի մասին խոսում է ելնելով ղարաբաղյան հարցի շուրջ ադրբեջանական դիրքորոշման վերլուծությունից: Սրանով առաջին հերթին նկատի է առնվում մինչև 1988 թվականի փետրվարը հաստատված status quo-ին վերադառնալը: Ադրբեջանն ուզում է վերականգնել այդ կարգավիճակը ժողովրդագրական, ռազմական, իրավական եւ քաղաքական դաշտերում՝ այդ մասին հայտարարելով բավական հստակ: Բանակցային գործընթացում նրանց ռազմավարությունն ուղղված է նրան, որպեսզի բոլոր ազատագրված տարածքները LՂՂ-ի հետ միասին անցնեն Ադրբեջանին, իսկ Լաչինն ու Շուշին լինեն իրենց ուղղակի վերահսկողության տակ: Այս պատճառով, երբ արեւմտյան ու հատկապես ամերիկյան միջնորդներն ասում են, որ հարկավոր է փոխզիջման գնալ, հարց է ծագում. իսկ ի՞նչ փոխզիջումներ կարելի է անել, երբ նման պահանջներ են ներկայացվում: Գոյություն ունեցող պայմաններում դա բացարձակ անընդունելի է մեզ համար՝ թեկուզ միայն անվտանգության լիովին հասկանալի պատճառներով: Բացի այդ, երբ խոսում են 1988 թվականի կարգավիճակի վերականգնման մասին, մեկ բառով անգամ չեն հիշատակում հայազգի փախստականներին, որոնք, ըստ էության, ստիպված կլինեն վերադառնալ ապրելու Ադրբեջանում գտնվող մշտական բնակության վայրեր:

Ընդ որում, Ադրբեջանի դիրքորոշումն անզիջում է, իսկ միջազգային հանրությանն այդպես ներկայացվում է Հայաստանի եւ Ղարաբաղի դիրքորոշումը: Արդեն բազում տարիներ մեզ փորձում են ներկայացնել որպես այն կողմը, որ չի ուզում փոխզիջումների գնալ: Վերջին շրջանում Հայաստանի վրա գործադրվող ճնշումն աճել է, ինչի օրինակն է վերջերս մերձնոսկոպյան Սնեգիրիում կայացած, այսպես կոչված, Ղարաբաղյան կոնֆերանսի 6-րդ փուլը: Մինչ այն կսկսվեր, մեզ էին ուղարկվել համանախագահների՝ հիմնահարցը կարգավորելու առաջարկները, այսպես կոչված՝ «Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում խաղաղարար գործընթացի սխեման», որտեղ սեւով սպիտակի վրա գրված է, որ մենք սկզբում պետք է դուրս բերենք մեր զորքերը, իսկ «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերջնական ձեւակերպումը կընթանա հետագա

բանակցությունների ճանապարհով»: Այսինքն, ԼՂՀ-ի բնակչությունը կրկին նախկինի պես, ինչպես 1921 թվականի Կավբյուրոյի որոշման ժամանակ, դուրս է մղվում գործընթացից: Ծանր բանավեճերից ու քննարկումներից հետո հայկական կողմը մերժեց այս տարբերակը:

-Այդ «սխեման» հայացք է միայն Բաքվի^օց, թե՞ Մոսկվայից եւս...

-Դա հայացք է Վաշինգտոնից, որը հարավկովկասյան տարածաշրջանը տեսնում է իր վերահսկողության տակ՝ բաց կոմունիկացիաներով ու տարածաշրջանի երկրների միջեւ կոնսենսուսի հասնելով: Սակայն այդ կոնսենսուսը Վաշինգտոնին ներկայանում է թուրքամետ գույներով. Հայաստանը, այնուամենայնիվ, Ռուսաստանի հետ է համագործակցում, իսկ Թուրքիան հիսուն տարուց ավելի ԱՄՆ-ի հանգուցային ռազմավարական գործընկերն է: Ընդ որում, Թուրքիան անհամեմատ ավելի հզոր երկիր է, քան Հայաստանը: Այս տեսանկյունից ելնելով են ամերիկացիները ջանում ինչ-որ մոդուս վիվենդի (ժամանակավոր համաձայնություն, կացութաձեւ) հաստատել, սակայն այնպիսի, որի պարագայում Հայաստանն ստիպված լինի անտեսել իր շահերը:

-Հաշվի չառնելով Ռուսաստանի եւ Իրանի գործոնը:

-Այո, Ռուսաստանն ու Իրանը կարծես մեր համախոհներն են: Սակայն լիակատար երաշխիք ու օժանդակություն նրանցից չենք կարող ակնկալել: Միեւնույն ժամանակ, մեր ռազմական անվտանգության իրավիճակն այնպիսին է, որ նույնիսկ առանց համախոհների էլ մեզ համար անհնար է որեւէ տարածք զիջել, ուղղակի չի կարելի:

-Դե ինչ, այս երկրների միջեւ ծավալված նման ռազմաքաղաքական իրավիճակի պարագայում զարմանալի չէ, որ ադրբեջանցիները սրում են լարվածությունն ու ռազմաշունչ ձգտումներ ցուցաբերում: Ի՞նչ է հնարավոր սրան հակադրել:

-Ադրբեջանում պատերազմի քարոզչությունն արվում է պետական մակարդակով: Իսկ մեզ մոտ, գոնե վերջին տասնամյակում, կարելի է խոսել միայն կազինոյի, լոտոյի ու այլ ժամանցի միջոցների քարոզչության մասին, որ արվում է հեռուստատեսության ու մասամբ էլ մամուլի միջոցով: Բայց չէ՞ որ մեր ժողովուրդը, հատկապես, երիտասարդները, շատ վատ են պատկերացնում, թե դա ինչ պատերազմ էր, թե ինչ նշանակություն է այն ունեցել Ղարաբաղի համար, եւ թե ինչ նշանակություն ունի Ղարաբաղը Հայաստանի համար, չնայած այն Հայաստանի մաս է կազմում: Երկրորդ հարցն այն է, թե արդյո՞ք Հայաստանը կարող է գոյատևել առանց Ղարաբաղի: Այս պատերազմում Ղարաբաղի եւ Հայաստանի տված զոհերի թիվը վաղուց արդեն պետական գաղտնիք չէ՝ միայն Ղարաբաղում շուրջ 4 հազար մարդ է զոհվել: Սա բացարձակ թիվ է, իսկ տոկոսային

հարաբերությունում: Վիետնամի պատերազմում ԱՄՆ-ն 55 հազար զոհ է ունեցել: Այն ժամանակ երկրի բնակչության թիվը 220 միլիոն էր կազմում: Եթե այս տեսանկյունով դիտարկենք Ղարաբաղի զոհերի թիվը, ապա նույն տոկոսային հարաբերությամբ ամերիկացիները պիտի շուրջ 4 միլիոն զոհ ունենային: Այսպիսին է հաշվարկը, սակայն ո՞վ է սրանով զբաղվում: Պետությունը պետք է զբաղվի հայրենասիրության դաստիարակությամբ: Սակայն, մեր քաղաքական գործիչներից շատերի մեջ բացակայում է հարցի տարրական ըմբռնումը:

-Չե՞ք հրահրում արդյոք երկիրը դեպի ռազմականացված հասարակություն:

-Բոլորովին, ուղղակի Չայաստանը անհրաժեշտաբար (եւ արդարացի) Եվրոպայի ամենառազմականացված երկրներից մեկն է՝ դարձյալ համեմատական կարգով: Սակայն նման իրականության հանդեպ հարկավոր է պատասխանատու մոտեցում ունենալ: Պետք է հնարավոր ներդաշնակ հարաբերություններ հաստատել հասարակության եւ բանակի միջեւ: Բանակը պետք է կառուցվեր ոչ թե խորհրդային մոդելով, այլ նման աշխարհառազմավարական խնդիրներ ունեցող մյուս երկրների փորձից ելնելով: Իմ կարծիքով, Չայաստանին ավելի հարմար կլինի իսրայելա-շվեյցարական պահեստային բանակի համակարգի ձեւափոխության վրա հիմնված սեփական մոդելը: Մեզ ոչ թե պատերազմի քարոզչություն է պետք, այլ ռազմական դրության հնարավորության գիտակցում: Այդ գիտակցությունը, ցավոք, բացել է: Պատմության ու աշխարհագրության ֆակուլտետների ուսանողներին հարցրեք, թե այսօր քանի քառակուսի կիլոմետր է գտնվում հայկական զինված ուժերի վերահսկողության տակ՝ ներառյալ Ղարաբաղն ու ազատագրված տարածքները, չեն պատասխանի: Բուհերի շրջանավարտները նույնիսկ չեն պատկերացնում Չայաստանի եւ տարածաշրջանի քարտեզը, բայց չէ՞ որ մեր եւ ներքին, եւ արտաքին զարգացման ողջ ռազմավարությունը, ըստ էության, հանգում է քարտեզին: Սա զարմանալի չէ: Չէ՞ որ մեր, այսպես կոչված, անկախ հեռուստաալիքներն էլ Չայաստանն ամբողջությամբ միեւնույն գույներով չեն ներկայացնում, նույնիսկ եղանակի տեսության ժամանակ:

Եվս մեկ մտահոգող փաստ են հայ-թուրքական հանդիպումները: Նրանք արդյունք չեն տալիս: Ավելին, յուրաքանչյուր հերթական հանդիպումից հետո հայ հասարակության մեջ մեծանում է իրավիճակի ընկալման բթությունը՝ իբր թուրքերն ու ադրբեջանցիները մեզ չեն սպառնում: Սրանից էլ բխում է մնացյալը՝ թուրքական զինվորականների ներկայությունը անցյալ տարի Չայաստանում ՆԱՏՕ-ի կազմակերպած զորավարությունների ժամանակ, Թուրքիայում հանգստանալու զովագրը, երաժշտությունը: Էլ ի՞նչ է հարկավոր...

Մյուս կողմից էլ ներքաղաքական իրավիճակը, որ քաղաքացիական բախումներ է հրահրում: Սրանք մեծ վնաս են հասցնում Չայաստանին: Սրան սպասում է Ադրբեջանը ու կօգտվի սրանից:

Մեր քաղաքական վերնախավը ինտելեկտուալ ռեսուրսների, ազգային արժանապատվության զգացողության պակաս ունի: Հասկանալու համար, թե մենք ինքներս մեզ ինչպես ենք վերաբերվում, բավական է վայրէջք կատարել «Ձվարթնոց» օդանավակայանում: Ազգի արժանապատվության մասին, ցավոք, ոչ ոք չի մտածում:

-Այսչափ հոռետեսական նոտայով չավարտելու համար հարցնեն. Ձեր նկարագրած իրավիճակից ինչպիսի՞ ելք կառաջարկեիք:

-Քանի դեռ ուշ չէ, հարկավոր է շտկել քաղաքական ինքնակազմակերպման եւ հայ ազգի ողջ ներուժի մոբիլիզացիայի ոլորտներում թույլ տված կոպիտ բացթողումները: Պետք է անհապաղ հայերի «Հայրենադարձության (ռեպատրիացիայի) մասին» օրենք մշակել ու ընդունել: Հայրենադարձությունը Հայաստանը կփրկի դատարկվելու ու հայաթափ լինելու մահացու վտանգից: Կազմակերպված հայրենադարձությունը կնպաստի երկրի տնտեսական բարգավաճմանը: Երկրի տնտեսությունը հզոր խթան ու ազդակ ձեռք կբերի, կընդլայնվի ներքին շուկան եւ սրա հետ միասին հայրենադարձները դրամագլուխ կբերեն Հայաստան: Կբարելավվի բարոյահոգեբանական մթնոլորտը: Հայրենադարձները կմեղմեն լարվածությունը հայ հասարակության բոլոր շերտերում: Վերջին տարիներին մեր հայրենակիցներից շատերն արտերկրում ավելի լավ են ապրել, քան մենք: Հայրենադարձների դերը կլինի այնպիսին, ինչպիսին ռազմաճակատում թարմ ուժերի համալրման դերն է: Իրավական ոլորտում. հայրենիքում հաստատվածները չեն հանդուրժի իշխանությունների անօրինությունները եւ կօգնեն վերականգնել սոցիալական արդարությունն ու իրավունքների հավասարության պայքարը: Մենք պարտավոր կլինենք երեխաներին սովորեցնել մայրենի լեզուն ու ներգրավել հայկական մշակույթի մեջ: Հակառակ դեպքում հայրենադարձները չեն ցանկանա ապրել այս երկրում: Սա կօգնի նաեւ աղանդների ու հասարակության մեջ գոյություն ունեցող այլ բացասական երևույթների դեմ պայքարի գործին: Հայաստան կգան օտար լեզուների տիրապետող երիտասարդներ եւ կյանքի կկոչեն գիտությունը: Եվ վերջապես, կպահպանվի ազգի զենոֆոնդը: 1989 թվականից Հայաստանում ծնելիությունը նվազել է: Մի քանի տարի հետո մենք սրա հետ կապված մեծ խնդիրներ կարող ենք ունենալ: Թույլ երկիրը շատ հեշտ դառնում է ավելի հզոր հարեւանի զոհը՝ սա պատմություն է, որ մենք արդեն անցել ենք, սակայն, ցավոք, շատ արագ մոռացել: